իր քնածին բարեմասնութիւնները և դարձել մի շարք խնդիրներում գրեթէ անկարող և անընդունակ։

Նշանագրութիւն։ Ամուսնական կեանքը Փէրիայում դեռ պահում է իր նահապետական, նախնական դրութիւնն այնպէս, ինչպէս Հայաստանի շատ տեղերում։

Հասակ։ Փէրիա գաւառում ևս ծնողներն իրենց զաւակներին շատ փոքր հասակում են պսակում և մանաւանդ՝ նշանում, բաւական է, որ տղան լինում է 14—15 տարեկան, իսկ աղջիկը 13—14՝ արդէն արքունքի հասած են համարում և հետևապէս ասում են «հարսանիքի ժուգն է»— (ժամանակն է)։ Սակայն շատ անգամ էլ ծնողները նկատի չեն ունենում առողջապահական այս ու այն պայմանները և իրենց զաւակներին ամուսնացնում են 13—14 տարեկան հասակում 20—22 տարեկան աղջկայ վրայ, որպէսզի իրենց բան ու գործին մի աշխատող ձեռք աւելացնեն։

Աղջիկ ուզել։ Ամուսնութիւնը կատարւում է ծնողների կամքով. ամուսնացողներն երբէք իրար չեն տեսնում. նրանք պարտական են հնազանդել իրենց ծնողների կամքին, թէկուզ իրենց սիրածն էլ չլինի։ Սովորաբար, ծնողները հանգամանքները յարմար նկատած պարագաներում, իրենց մէջ մի աղջկայ վրայ համաձայնութիւն կայացնելուց յետոյ մի հոգի ուղարկում են աղջկայ տունը, որպէսզի հասկանան նրա ծնողների տրամադրութիւնը. եթէ նրանք համաձայն են, որոշւում է նշանագրութեան օրը։

Նշան դնել։ Նոյն երեկոյեան տղայի հայրը հրաւիրում է իր մօտիկ ազգականներին, ծանօթներին և քահանային (որոնք կոչւում են նշանախօս), և նրանց հետ միասին գնում աղջկայ տունը՝ տանելով նշանը—հարսնացուի համար մի մատանի (արծաթից կամ ոսկուց), 10—15 թուման փող և երկու գլուխ շաքար, որը զարդարուած է լինում կարմիր-կանաչ մետաքսէ թելերով, մի ապարանջան և այլն։

Երբ հասնում են հարսնացուի տունը, աղջկայ տէրն ուրախ դիմաւորում է խնամիներին, ներս հրաւիրում, ուր